

Արձանագրություն թիվ 8

Երևանի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետի
խորհրդի նիստի, կայացած 2017թ.մայիսի 30 -ին

- Օրակարգ՝ 1. Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվություն:
2. Ասպիրանտների ատեստավորում:
3. Դոկտորական ատենախոսության թեմայի հաստատում:
4. Ընթացիկ հարցեր:

1. Խորհրդի նախագահ Ս.Վ. Ղոչիկյան.

-Ներկայացնում այսօր մեր նիստում քննարկվող հարցերը:

Պետք է լսենք Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ՝ պրոֆեսոր
Շ.Ա.Մարգարյանի հաշվետվությունը:

-Ելույթ ունեցավ Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆ.
Շ.Ա.Մարգարյանը (հաշվետվությունը կցվում է):

2. Խորհրդի նախագահ Ս.Վ. Ղոչիկյան.

Ներկայացնում ասպիրանտների հարցը: Անօրգանական և անալիտիկ քիմիայի
ամբիոնի 1-ին տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ Համիդե Ահմադ
Մահմուդի Դեհսիտորանի ատեստավորման հարցը:

Ելույթ ունեցան - քիմիայի ֆակուլտետի դեկան Տ.Ղոչիկյանը հաղորդեց, որ հարցը
քննարկվել է ամբիոնում, և հաշվի առնելով ասպիրանտի կատարած
աշխատանքները ամբիոնը երաշխավորել է ատեստավորման :Հաշվետու
Ժամանակահատվածում Համիդե Ահմադ Մահմուդի Դեհսիտորանի կատարել է
ծավալուն աշխատանք, որի հիման վրա ներկայացրել է երկու զեկուցման թեզիս
միաջազգային կոնֆերանսին: Ասպիրանտը պատրաստվում է հունիսի 2-ին հանձնել
օտար լեզու (անգլերեն) քննություն:

Որոշեցին – Հաշվի առնելով Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի
կարծիքը՝ ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց ատեստավորել
ասպիրանտ ասպիրանտ Հ. Ա. Մահմուդին Դեհսիտորանի:

Լսեցին – Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի 1-ին տարվա առկա ուսուցմամբ
ասպիրանտ Աշոտ Սամվելի Մխիթարյանի ատեստավորման հարցը:

Ելույթ ունեցան - Քիմիայի ֆակուլտետի դեկան Տ.Ղոչիկյանը հաղորդեց, որ հարցը քննարկվել է ամբիոնում, և հաշվի առնելով ասպիրանտի կատարած աշխատանքները ամբիոնը երաշխավորել է ատեստավորման: Հաշվետու ժամանակահատվածում ասպիրանտը հանձնել է 9 ստուգարք ընդհանուր պատրաստվածության կրթամասից և 1 ստուգարք մասնագիտական պատրաստվածության կրթամասից: Իրականացրել է սուլֆոն-ջուր և սուլֆոն-սպիրտ համակարգերի ուսումնասիրությունը ԻԿ սպեկտրոսկոպիայի, Gaussian 03 և Gaussian 09 քվանտաքիմիական մեթոդներով: Կատարված աշխատանքների հիման վրա ներկայացված է 1 թեզիս միջազգային կոնֆերանսում:

Որոշեցին – Հաշվի առնելով ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի կարծիքը՝ ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց ատեստավորել ասպիրանտ Ա.Ա.Մխիթարյանին:

3. Խորհրդի նախագահ Տ.Վ. Ղոչիկյան.

-Ֆակուլտետի գիտական խորհուրդը պետք է հաստատի Գևորգ Սերգեյի Գրիգորյանի դոկտորական ատենախոսության թեման:

Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի կողմից դոկտորական ատենախոսության թեմա է առաջարկվում «Հետերոգեն և հոմոգեն ջրային համակարգերում հիդրոպերօքսիդների փոխարկումները»:

Որոշեցին – Հաշվի առնելով ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի առաջարկը՝ ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց հաստատել Գ.Ս.Գրիգորյանի «Հետերոգեն և հոմոգեն ջրային համակարգերում հիդրոպերօքսիդների փոխարկումները» դոկտորական ատենախոսության թեմա:

Խորհրդի նախագահ՝

Ք.գ.դ, պրոֆեսոր

Տ.Վ. Ղոչիկյան

Գիտ. քարտուղար՝

Ք.գ.թ., ասիստենտ

Մ.Ա.Սամվելյան